ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2023 թվականի N 693 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 26-ի «Իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի փաստաթղթերի կնքման ընթացակարգերը սահմանելու մասին» N 110-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) 6-րդ կետը «վրա» բառից հետո լրացնել «, բացառությամբ իրավասու մարմնի և օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների միջև հետախուզական, այդ թվում՝ արտաքին հետախուզական և հակահետախուզական գործունեությանն առնչվող միջազգային բնույթի փաստաթղթերի կնքման դեպքերի» բառերով.

2) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«25. Միջազգային բնույթի փաստաթղթի տեքստը, որպես կանոն, պարունակում է դրույթ, որը սահմանում է, որ կնքվող փաստաթուղթը չի հանդիսանում միջազգային պայմանագիր։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ